ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հիմնվելով վերջին տարիների արդյունքների և շահութաբերության մակարդակի վրա՝ հեռանկարային զարգացման համատեքստում Բանկի առաջիկա տարիների գործունեությունը միտված է այնպիսի համակարգային միջոցառումների և տեխնոլոգիաների ներդրմանն ու զարգացմանը, որոնք հիմնարար և կայուն հիմքեր ու նախադրյալներ կստեղծեն Բանկի նոր որակական զարգացման համար:

Բանկը հաշվետու ժամանակաշրջանում շարունակել է հաճախորդներին որակյալ ծառայությունների մատուցումը:

Անդրադառնալով հիմնական ֆինանսական ցուցանիշներին՝ նշենք, որ 2024 թվականին Բանկին հաջողվեց արձանագրել ակտիվների և պարտավորությունների աճ: Մասնավորապես,

- Բանկի ընդհանուր Ակտիվները նախորդ տարվա համեմատ աճել են 70 մլրդ դրամով կամ 14%-ով և կազմել 576 մլրդ դրամ:



✓ Համախառն վարկային պորտֆելը կազմել է մոտ 318 մլրդ դրամ նախորդ տարվա համեմատ աճելով 46 մլրդ դրամով (17.1%-ով) և կազմել ընդհանուր ակտիվների 55%-ը, որից,

- Անհատական վարկային պորտֆելը աճել է մոտ 33 մլրդ դրամով (20.6%-ով)
- Բիզնես վարկային պորտֆելը աճել է մոտ 13 մլրդ դրամով (12%-ով)

2024թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



- Տարեվերջին Բանկի ընդհանուր պարտավորությունները նախորդ տարվա համեմատ աճել են մոտ 56.8 մլրդ դրամով կամ 13.2%-ով և կազմել 487 մլրդ դրամ: Սա խոսում է Բանկի նկատմամբ հաճախորդների վստահության, վարվող ճկուն սակագնային քաղաքականության և մատուցվող ծառայությունների որակի մասին:



✓ Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ հոդվածը մնացել է գրեթե անփոփոխ և կազմել ընդհանուր պարտավորությունների մոտ 73%-ը:

2024թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



- Սեփական կապիտալը նախորդ տարվա համեմատ աճել է 13.6 մլրդ դրամով կամ 18%-ով և կազմել 89.3 մլրդ դրամ:



- 2024թ.-ին Բանկի հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունները բնորոշել են նրա վճարունակության, իրացվելիության բարձր մակարդակը՝ վարկային և իրացվելիության ռիսկերին դիմակայելու մեծ պոտենցիալը: Հիմնական տնտեսական նորմատիվները ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում եղել են ՀՀ ԿԲ սահմանված նորմատիվների թույլատրելի մեծության սահմաններում:

2024թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Տարվա զուտ շահույթը կազմել է 15.8 մլրդ դրամ: Այն նախորդ տարվա համեմատ աճել է 8.2%-ով:



- Գործառնական շահույթը կազմել է 19.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 0.7 մլրդ դրամով կամ 3.9%-ով:



- Տոկոսային եկամուտները կազմել են 45.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 22%-ով:
- Տոկոսային ծախսերը կազմել են 19.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 24%-ով:

2024թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



- Զուտ տոկոսային եկամուտները կազմել են մոտ 25.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցելով 20%-ով:

- Ոչ տոկոսային եկամուտները կազմել են 11 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 16.4%-ով՝ պայմանավորված հիմնականում զուտ առևտրային եկամտի նվազմամբ:

- Ոչ տոկոսային ծախսերը կազմել են մոտ 17 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 8.9%-ով:



CONVERSE BANK

TRUSTED BY GENERATIONS

2024թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

- Զուտ վերադարձը կազմել է 312 մլն դրամ, նախորդ տարի զուտ մասհանումը կազմել էր 364 մլրդ դրամ:
- Ծախս/Եկամուտ հարաբերակցությունը կազմել է 47.1%՝ նախորդ տարվա 46% ցուցանիշի դիմաց:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հայրենական և համաշխարհային տնտեսություններում տեղի ունեցող իրադարձությունները իրենց ազդեցությունն են թողնում Բանկի կողմից՝ թե՛ ներքին և թե՛ արտաքին շուկաներում իրականացվող գործունեության վրա: Օրըստօրե ավելանում են արտաքին աշխարհի մարտահրավերները, որոնց դիմակայելու համար Բանկը իրականացնում է ռիսկերի պարբերական մոնիտորինգ՝ մշակելով համապատասխան միջոցառումների ծրագրեր:

Սույն ֆինանսական հաշվետվություններին կից ներկայացվում է “Ռիսկի կառավարում” թիվ 31 ծանոթագրությունը, որում բացահայտված են Բանկի գործունեությանը բնորոշ հիմնական ռիսկերը և դրանց գնահատմանն և կառավարմանն ուղղված՝ Բանկի կողմից կիրառվող քաղաքականությունը:

Բանկի բաժնետերերը և ղեկավարությունը հավատարիմ են Բանկի հեռանկարային զարգացմանն ուղղված իրենց որդեգրած ուղուն. այն է Բանկի գործունեության շարունակական արդիականացում, սպասարկման ցանցի ընդլայնում և մատուցվող ծառայությունների որակի բարձացում:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ՄԱՐՍԵԼՈ ՎԵՆԴԵ**

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ **ԱՐՍԵՆ ԳԱՄԱՂԵԼՅԱՆ**